ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՍՍՀՄ ԳԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ (1935—1940)

ՍԱՄՎԵԼ ԿՈՒՐԿՂՅԱՆ

Մեր հանրապետությունում 1920—30-ական թվականներին սոցիալիստական ինդուստրիայի ստեղծումը խթանեց գիտական հետազոտությունների զարգացումը, ինչպես նաև ստեղծեց անհրաժեշտ նյութական նախադրյալներ՝ մեծ գիտության վերելքի համար։ Այդ առումով կարևոր նշանակություն ունեցավ 1935 թ. փետրվարի 1-ին ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղի հայկական բաժանմունքի, իսկ մայիսի 25-ին՝ ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ստեղծումը։ «Հայկական ՍՍՀ-ի գիտական և մշակույթի կյանքում նշանակալից երևույթ էր ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ստեղծումը,— գրում է Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։— Այն կազմակերպվեց 1935 թ. և հիմք դարձավ հետագայում Հայկական ՍՍՀ ԳԱ-ի ստեղծման համար»[1]։ Մասնաճյուղը միավորեց հանրապետության մի շարք առաջատար գիտահետազոտական կազմակերպություններ՝ երկրաբանության, կենսաբանության, քիմիայի ինստիտուտները, հնագիտության բաժինը, ինչպես նաև բուսաբանական այգին։

1935 թ. մասնաճյուղի գիտահետազոտական կազմակերպություններում աշխատում էին 73 գիտաշխատողներ, այդ թվում 2 ակադեմիկոս, 26 ավագ և 33 կրտսեր գիտաշխատողներ[2]։ 1935 թ. օգոստոսի 1-ից բացված ասպիրանտուրայում սովորում էին 14 ասպիրանտներ (կենսաբանության ինստիտուտում՝ 7, երկրաբանության ինստիտուտում՝ 4, քիմիայի ինստիտուտում՝ 3 հոգի)[3]։

Գիտաշխատողների անբավարարությունը հանգեցնում էր ավելորդ համատեղությունների։ Այս հանգամանքը գիտական հետազոտությունների զարգացման ամենաէական խոչընդոտներից էր։ Գիտաշխատողների զգալի մասի որակավորման ցածր մակարդակը և գիտության մի շարք կարևոր բնագավառներում նրանց բացակայությունը գիտահետազոտական կազմակերպություններին թույլ չէին տալիս իրենց պլաններում մտցնել բարդ և կարևոր պրոբլեմներ, նեղացնում էին գիտական հետազոտությունների շրջանակը և հանգեցնում հանրապետությունում գիտության անհամամասնական զարգացմանը։ Այսպես, 1938 թ. նոյեմբերի 28-ին երկրաբանության ինստիտուտի ակտիվի գիտական սեսիայի երկրորդ նիստի ժամանակ նշվեց, որ կադրերի

---

1 Վիկտոր Համբարձումյան, Գիտության վերելքի ուղիներում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», հաս. գիտ., 1950, № 11, էջ 4)։

2 ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 4, 1936, թ. 24։

3 Նույն տեղում, էջ 41։

բացակայությունը թույլ չի տվել լրիվ ապահովել աշխատանքները հիդրոերկրաբանության և երկրաբանության այլ կարևոր բնագավառներում[4]։

Գիտահետազոտական աշխատանքների ծավալմանը խոչընդոտում էր ոչ միայն գիտական կադրերի պակասը։ Խիստ սահմանափակ էին նաև գիտահետազոտական աշխատանքներին տրամադրվող ֆինանսական միջոցները, ինչպես նաև թույլ էր կազմակերպությունների նյութատեխնիկական բազան, չկային անհրաժեշտ լաբորատորիաներ և գիտական սարքավորումներ։ 1935 թ. մասնաճյուղի գիտական հետազոտությունների ֆինանսավորման ընդհանուր ծավալը կազմեց ընդամենը 650 հազ. ռ.[5]։ Նման պայմաններում կարևոր նշանակություն էին ձեռք բերում տարբեր աշխատանքների կոորդինացման հարցերը, հատկապես հարակից գիտահետազոտական կազմակերպությունների ջանքերի միավորումը կոլեկտիվ օգտագործման լաբորատորիաների ստեղծման գործում։ Միջգերատեսչական կազմակերպությունների ստեղծմանն իրենց հերթին խանդարում էին գիտահետազոտական կազմակերպությունների աշխատանքը տարբեր պլաններով կատարելը, գերատեսչական արգելքները, ընդունված պարտավորությունների կատարման նկատմամբ անվստահությունը[6]։ Սակայն քիչ չէին նաև գիտահետազոտական կազմակերպությունների համատեղ աշխատանքի դրական օրինակները։ Այսպես, ակադեմիկոսներ Ն. Վավիլովը և Ա. Իոֆֆեն որոշեցին Կիրովականի բուսաբանական այգում անցկացնել ցեսիլցելյուլոզի թաղանթի փորձարկումը։ Թաղանթի միջով, ի տարբերություն սովորական ապակու, ներս էին թափանցում ուլտրամանուշակագույն ճառագայթներ, բարերար ազդելով բույսերի աճի և բերքատվության վրա։ Այդ փորձի իրականացման համար 1938 թ. հունիսի 27-ին ՍՍՀՄ ԳԱ մասնաճյուղերի և բազաների կոմիտեին ուղղած նամակում Ն. Վավիլովը և Ա. Իոֆֆեն խնդրում էին «Կիրովականի բուսաբանական այգուն հելիոշերմոցների կառուցման և սարքավորումների համար սահմանված նախահաշվից ավելի բաց թողնել 40 հազ. ռուբլի»[7]։ Բուսաբանական այգու համատեղ օգտագործումից ուժեղացավ նրա նյութատեխնիկական բազան։

Գիտական ուժերի կոոպերացման հարցերը կարևոր նշանակություն էին ձեռք բերում գիտական բարդ խնդիրների լուծման ժամանակ։ Կոոպերացումը թույլ էր տալիս մի կողմից խուսափել գիտահետազոտական աշխատանքների վնասակար զուգահեռությունից և կրկնությունից, մյուս կողմից՝ նպաստում էր բարձր որակավորում ունեցող աշխատանքի և նյութական միջոցների արդյունավետ օգտագործմանը։ Միևնույն ժամանակ, այդ գործը պատշաճ մակարդակով չէր դրված։ Հաճախ գիտահետազոտական կազմակերպությունները չէին համաձայնեցնում իրենց թեմատիկ պլանները, տարբեր տեղերում կատարվող աշխատանքների մասին անհրաժեշտ ինֆորմացիայի բացակայությունը դժվարացնում էր միասնական թեմատիկ պլանների կազմումը, հանգեցնելով գիտական հետազոտությունների վնասակար կրկնօրինակման։ Անհրաժեշտ կապ չկար նաև մասնաճյուղի գիտահետազոտական կազմակերպությունների և ՍՍՀՄ ԳԱ միջև։ Մասնաճյուղի գիտական կազմակերպությունն-

---

4 Նույն տեղում, գ. 15, 1938, թ. 89։
5 Նույն տեղում, գ. 4, 1938, թ. 48։
6 Նույն տեղում, գ. 3, 1938, թ. 18։
7 Նույն տեղում, գ. 4, 1938, թ. 15։

րի և ՍՍՀՄ ԳԱ կենտրոնական գիտահետազոտական կազմակերպությունների կապի ուժեղացման անհրաժեշտության մասին նշված է մասնաճյուղի գիտական խորհրդի 1937 թ. նոյեմբերի 22-ի որոշման մեջ[8]։

Այդ տարիներին արվել են շատ առաջարկություններ՝ գիտահետազոտական կազմակերպությունների կոոպերացման և դրանց աշխատանքներում նկատվող անհամաձայնեցվածության վերացման վերաբերյալ։ Մասնավորապես, առաջարկվում էր մասնաճյուղի նախագահությանը կից կազմակերպել ինֆորմացիոն բյուրո։ Այն պետք է տեղեկություններ ունենար մասնաճյուղի գիտահետազոտական կազմակերպություններում իրականացվող բոլոր մշակումների մասին։ Այդպիսի բյուրոյի ստեղծումը, անկասկած, կնպաստեր գիտահետազոտական կազմակերպությունների աշխատանքների կոորդինացմանը, ինչպես նաև կարևոր գիտատեխնիկական խնդիրներ լուծելիս գիտական ուժերի կենտրոնացման և կոոպերացման գործում եղած թերությունների վերացմանը։

Միաժամանակ, մեր կարծիքով, արվեցին նաև մի շարք ոչ ճիշտ առաջարկություններ։ Այսպես, օրինակ, առաջարկվում էր կառույցների ինստիտուտը մտցնել մասնաճյուղի համակարգի մեջ՝ գտնելով, որ դա կվերացնի կերամիկայի բնագավառում այդ և քիմիայի ինստիտուտների հետազոտությունների կրկնօրինակումը։ Սակայն նման ճանապարհով դժվար թե դա վերացվեր։ Գլխավորն այստեղ ոչ թե գերատեսչական ենթակայությունն էր, այլ գերատեսչությունների գիտահետազոտական կազմակերպությունների աշխատանքները կոորդինացնելու կարողությունը, դրանց աշխատանքների միասնական պլանով կազմակերպումը, տարբեր ձեռնարկությունների աշխատանքային պլանների օրգանական կապակցումը և դրա հիման վրա ակադեմիական ու ճյուղային գիտահետազոտական կազմակերպությունների կապի ուժեղացումը։ Այդ գործում կարևոր նշանակություն կարող էին ունենալ տնտեսական պայմանագրերը, որոնք կարող էին կնքվել ակադեմիայի և ճյուղային գիտահետազոտական կազմակերպությունների միջև։ Ակադեմիական ինստիտուտները կարող էին այդ պայմանագրերի հիման վրա ճյուղային ինստիտուտների համար կատարել տեսական մշակումներ։ Կապերի ուժեղացմանը կարող էին նպաստել նաև տարբեր գերատեսչությունների համատեղ կոնֆերանսների և խորհրդակցությունների անցկացումը, որտեղ կքննարկվեին դրանց թեմատիկ պլանները։

Գիտական հետազոտությունների կոոպերացման և կոորդինացման հետ կապված՝ մեծ նշանակություն էր ձեռք բերում գիտական կարևոր պրոբլեմների լուծման նկատմամբ կոմպլեքս մոտեցումը, քանի որ հաճախ պրոբլեմի կոմպլեքս ուսումնասիրման համար պահանջվում էին գիտության տարբեր ճյուղերի ջանքեր։ Օրինակ, եթերաբեր բույսերի ուսումնասիրությունն անհնարին կլիներ միայն հողագործության սեկտորի ուժերով։ Այդ նպատակի համար անհրաժեշտ էր ներգրավել քիմիայի և կենսաբանության ինստիտուտների գիտական ուժերը։ Մասնաճյուղի ակտիվի 1938 թ. մայիսի 19-ի նիստում պրոֆ. Ե. Ղազարյանը նշում էր, որ «թեմատիկ պլանների մշակման ժամանակ անհրաժեշտ է կարևոր նշանակություն տալ աշխատանքների կոմպլեքսայնությա-

---

8 Նույն տեղում, գ. 15, 1938, թ. 53։

նը, քանի որ, հակառակ դեպքում, անհնարին է ունենալ բազմակողմանի ուսումնասիրված նյութ»[9]։

Մասնաճյուղի գործունեության մեջ շրջադարձային եղավ 1938 թվականը։ Բանը ոչ միայն այն էր, որ ավելացավ գիտահետազոտական կազմակերպությունների թիվը, ամրապնդվեց դրանց նյութատեխնիկական բազան, մեծացավ գիտական աշխատողների թվաքանակը, այլև այն, որ ընդլայնվեց հետազոտությունների շրջանակը, ամրապնդվեց մասնաճյուղի գիտահետազոտական կազմակերպությունների կապը հանրապետության ժողովրդական տնտեսության հետ։ Գիտական հետազոտությունների կազմակերպումը և պլանավորումը հետագա զարգացում ստացավ։ Եթե 1935 թ. մասնաճյուղում աշխատում էին 73 գիտաշխատողներ, ապա 1938 թ. նրանց թիվը հասավ 140-ի, իսկ աշխատողների ընդհանուր թվաքանակն ավելացավ 2,4 անգամ և կազմեց 270 մարդ[10]։ Ավագ գիտաշխատողների թիվն ավելացավ 2,9 անգամ և կազմեց 75 մարդ, կրտսեր գիտաշխատողներինը՝ ավելի քան 1,9 անգամ (65 մարդ), իսկ լաբորանտների և այլ գիտատեխնիկական աշխատողների թիվը՝ 1,5 անգամ[11]։ Դա, անշուշտ, մեծ նշանակություն ուներ մասնաճյուղի գիտական պոտենցիալի ուժեղացման, ինչպես նաև բարդ գիտատեխնիկական խնդիրների լուծման գործում։ Ավելացավ ոչ միայն գիտաշխատողների թիվը, այլև բարձրացավ նրանց որակավորման մակարդակը։ Այսպես, 1938 թ. դոկտորների թիվը 1937 թ. համեմատությամբ ավելացավ 1,7 անգամ և կազմեց 23 մարդ։ Դա արդյունք էր նաև ասպիրանտուրայի համակարգի ամրապնդման։ Ասպիրանտների թիվը 1935 թ. համեմատ 1938 թ. ավելացավ ավելի քան 2,4 անգամ[12]։ Գիտաշխատողների թվի ավելացումը և որակավորման մակարդակի բարձրացումը հնարավորություն տվեցին ապահովելու ասպիրանտների գիտական ղեկավարումը։ Դրան նպաստեցին նաև ՍՍՀՄ ԳԱ նախագահության մի շարք որոշումներ՝ ուղղված ազգային հանրապետություններում գիտական կադրերի պատրաստմանը։ Օրինակ, ՍՍՀՄ ԳԱ նախագահության 1938 թ. դեկտեմբերի 11-ի նիստում որոշվեց ազգային հանրապետությունների այն ասպիրանտների համար, որոնք վատ էին տիրապետում ռուսաց լեզվին, երեքի փոխարեն սահմանել չորս տարվա ասպիրանտական ժամկետ[13]։ Դա պայմանավորված էր նաև նրանով, որ գիտական գրականությունը լույս էր տեսնում հիմնականում ռուսերեն լեզվով։ Գիտական կադրերի պատրաստումն իրականացվում էր գիտության բոլոր ուղղություններով։ Եթե 1935 թ. հասարակական գիտությունների գծով ոչ մի ասպիրանտ չկար, ապա 1938 թ. նրանց թիվն ավելին էր (15 մարդ), քան բնական և տեխնիկական գիտությունների գծով՝ միասին վերցրած (14 մարդ)։ Դա պայմանավորված էր սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում հասարակական գիտությունների դերի բարձրացմամբ, ինչպես նաև հին և միջին դարերի Հայաստանի պատմության ուսումնասիրությամբ։

Մասնաճյուղի համակարգում 1938 թ. գործում էին 8 գիտահետազոտա-

---

9 Նույն տեղում, գ. 3, 1938, թ. 5։

10 Նույն տեղում, գ. 15, 1938, թ. 3—4։

11 Նույն տեղում, գ. 10, 1938, թ. 31։

12 Նույն տեղում, գ. 15, 1938, թ. 3—4։

13 Նույն տեղում, գ. 4, 1938, թ. 44։

կան կազմակերպություններ՝ 1935 թ. 5-ի դիմաց։ Դրանք կենսաբանության, պատմության և նյութական կուլտուրայի, քիմիայի, երկրաբանության, գրականության և լեզվի ինստիտուտներն էին, Սևանի հիդրոկենսաբանական կայանը, պետական աստղադիտարանը։

Գիտահետազոտական կազմակերպությունների թվի ավելացման հետ միասին ուժեղացավ դրանց նյութատեխնիկական բազան։ Ձեռք բերվեցին մի քանի հարյուր հազար ռուբլու արժողությամբ սարքավորումներ[14]։ Վերակառուցվեցին երկրաբանության, պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտների շենքերը։ Ավելացավ գիտական հետազոտությունների ֆինանսավորման ծավալը։ Մասնաճյուղի ֆինանսավորումը 1935 թ. համեմատ ավելացավ 7 անգամ և 1938 թ. կազմեց մոտ 4,5 մլն ռ.[15]։

Գիտական հետազոտությունները 1938 թ. կատարվում էին հիմնականում երկու ուղղություններով. առաջին՝ ուսումնասիրվում էին հանրապետության բնական հարստությունները և արտադրողական ուժերը, երկրորդ՝ Հայաստանի պատմությունը, հայոց գրականությունը, լեզուն, կուլտուրան։ Հետազոտությունների ուղղությունները որոշվում էին մասնաճյուղի գիտահետազոտական կազմակերպությունների կառուցվածքով։ Մի շարք գիտնականներ գտնում էին, որ մասնաճյուղը պետք է մշակի բացառապես տեսական պրոբլեմներ և ոչ թե տարվի կիրառական բնույթի թեմաներով։ Մյուսները գտնում էին, որ մասնաճյուղը չպետք է ուսումնասիրի ընդհանուր պրոբլեմներ, այլ պետք է սահմանափակվի առանձին մասնակի հարցերի լուծմամբ և դրա հիման վրա կատարի եզրակացություններ ու առաջարկություններ[16]։ Առանձին գիտնականներ ընկան մի այլ ծայրահեղության մեջ, գտնելով, որ մասնաճյուղը պետք է զբաղվի բացառապես պրակտիկ պրոբլեմներով[17]։ Մեր կարծիքով, վերը նշված բոլոր տեսակետներն էլ միակողմանի էին։ Մասնաճյուղը, ինչ խոսք, պետք է զբաղվեր տեսական պրոբլեմների մշակմամբ, սակայն նա դրանք պետք է հասցներ կիրառական հետազոտությունների փուլին և աջակցեր դրանց ներդրմանը։ Մի խոսքով, մասնաճյուղը պետք է զբաղվեր ոչ թե տեսական, այլ տեսական-կիրառական հետազոտություններով։ Դա հնարավորություն կտար, մի կողմից, մշակել տեսական պրոբլեմներ, մյուս կողմից՝ անխզելի կապ ունենալ ժողովրդական տնտեսության հետ։

Ելնելով գիտության պլանավորման տեսության բնագավառում եղած տարաձայնություններին, պլանների հիմքում ընկած էին ժողովրդական տնտեսության փաստացի պահանջները և ոչ թե առանձին գիտաշխատողների սուբյեկտիվ ցանկություններն ու ձգտումները։ 1938 թ. ժողովրդական տնտեսության մեջ ներդրված էին 11 ավարտված թեմաներ[16]։ Եթե հաշվի առնենք, որ մինչ այդ ներդրման փուլ չէր հասցվել ոչ մի թեմա, ապա այդ արդյունքը կարելի է համարել նվաճում՝ մասնաճյուղի և ժողովրդական տնտեսության միջև կապի ուժեղացման գործում։ Մասնաճյուղում ավելի ու ավելի մեծ տեղ էր

14 Նույն տեղում, գ. 16, 1938, թ. 14։
15 Նույն տեղում, գ. 15, 1938, թ. 24։
16 Նույն տեղում, գ. 2, 1938, թ. 83։
17 Նույն տեղում, գ 4, 1938, թ. 34։
18 Նույն տեղում։

հատկացվում պրակտիկ հետազոտություններին, ակադեմիական գիտությունների և ժողովրդական տնտեսության միջև կապի ուժեղացմանը։

Չնայած գիտական հետազոտությունների կազմակերպման և պլանավորման բնագավառում որոշակի հաջողություններին, դրանց կատարման մակարդակը դեռևս անբավարար էր։

Մասնաճյուղի ակտիվի 1938 թ. մայիսի նիստում անցումային թեմաների պրակտիկայի դեմ հանդես եկավ երկրաբանության ինստիտուտի դիրեկտոր, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր Հ. Կարապետյանը։ Նա առաջարկեց կոնկրետ միջոցառումներ՝ ուղղված չհիմնավորված անցումային թեմաների վերացմանը։ Ընդ որում, նա գտնում էր, որ անցումային թեմաները պետք է արտացոլվեն պլաններում՝ յուրաքանչյուր տարվա համար կոնկրետ եզրակացություններով և առաջարկություններով[19]։

Շատ դեպքերում անցումային թեմաները գիտական անորոշության արդյունք էին։ Այդ պայմաններում շատ դժվար էր որոշել հետազոտությունների համար անհրաժեշտ իրական ժամկետները, հատկապես տեսական գիտության մեջ։

Գիտական հետազոտությունների պրակտիկայում տեղ գտած թերություններից էր բազմաթեմայնությունը։ Շատ գիտահետազոտական կազմակերպություններ փորձում էին ինչ որ ձևով վերացնել այն. մեխանիկորեն կրճատում էին հետազոտվող թեմաների թիվը, հաճախ դրանք վերանվանում էին՝ դարձնելով ավելի ընդհանուր և խոշորացված, բայց դրանց բովանդակությունը չէր փոխվում։

Գիտահետազոտական աշխատանքների պլանում մտնում էր «Թեմայի գիտական և ժողովրդատնտեսական նշանակությունը» բաժինը։ Սակայն, որպես կանոն, այն չէր լրացվում, չէր նշվում թեմաների գիտական և ժողովրդատնտեսական նշանակությունը։ Այսպես, օրինակ, քիմիայի ինստիտուտում յոթ գիտաշխատողների առկայության պայմաններում կատարվում էին նույնքան գիտական թեմաներ, որոնք չունեին ոչ մի ներքին միասնություն։ Այդ թեմաները վերցվում էին ընդհանուր քիմիայի ամենատարբեր բնագավառներից[20]։

Բազմաթեմայնության պատճառներից մեկն էլ այն էր, որ միևնույն գիտաշխատողները կատարում էին մի քանի գիտահետազոտական աշխատանքներ։ Դա պայմանավորված էր մի քանի պատճառներով և ամենից առաջ գիտաշխատողների ոչ բավարար թվաքանակով և արտապլանային թեմաների կատարումով[21]։

Ի մի բերելով մասնաճյուղի համակարգում 1930-ական թվականներին գիտական հետազոտությունների զարգացման տենդենցները, անհրաժեշտ է նշել, որ գերիշխող ուղղությունը՝ գիտական հետազոտությունների զարգացման ստրատեգիան, պրակտիկ ուղղվածությունն էր, նյութական արտադրության հետ ինտեգրացիան։ Այսպես, օրինակ, կենսաբանության ինստիտուտում 1938 թ. 13 թեմաներից միայն մեկն էր կրում տեսական բնույթ, մնացած 12-ն ունեին զուտ կիրառական նշանակություն[22]։ Այդ տենդենցը նշել են նաև երկրի

19 Նույն տեղում։
20 Նույն տեղում, գ. 14, 1939, թ. 45։
21 Նույն տեղում, գ. 13, 1938, թ. 25։
22 Նույն տեղում, գ. 4, 1939, թ. 14։

ակադեմիական գիտահետազոտական կազմակերպությունների առաջատար գիտնականները։ Օրինակ, կենսաբանության ինստիտուտի թեմատիկ պլանի գրախոսականում պրոֆ. Տ. Լեպինը (Մոսկվա) նշում էր, որ այն կրում է զուտ ճյուղային բնույթ և որ թեմաներից շատերը հաջողությամբ կարող են մշակել Հայկական ՍՍՀ-ի սելեկցիոն կայանները։ «Այդպիսի զուտ սելեկցիոն թեմաների մշակումը քիչ է հիմնավորված,— գրում էր նա։— Գիտությունների ակադեմիան չպետք է փոխարինի սելեկցիոն հաստատությունների աշխատանքը, այլ պետք է տա սելեկցիայի տեսությունը»[23]։

Ելնելով նշված վիճակից, անհրաժեշտ քայլեր էին կատարվում կիրառական հետազոտություններից աստիճանաբար անցնելու տեսական աշխատանքների մշակմանը, որոնք ուղղված էին սոցիալ-տնտեսական և գիտական ավելի հեռանկարային նպատակների, ավելի մեծ չափով էին զուգակցում տեսական և կիրառական հետազոտությունները, հիմք ստեղծելով գիտական հետազոտությունների հետագա զարգացման համար։

Մասնաճյուղում 1940-ական թվականների սկզբին կադրերի, տեխնիկական և նյութական պոտենցիալի հետագա ամրապնդմամբ ավելի նպատակասլաց դարձավ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ընդունակ կադրերի ընտրությունը։ Ժողովրդական տնտեսության ճյուղերում 1940 թ. ներդրվեցին 21 թեմաներ, այսինքն 10 թեմայով ավելի, քան 1938 թ.։ Աշխատողների ընդհանուր թիվը 1940 թ. կազմեց 350 մարդ, որոնցից 208-ը գիտաշխատողներ էին։ Աշխատողների թիվը 1937 թ. համեմատությամբ ավելացավ 3,7, իսկ գիտաշխատողներինը՝ 3,6 անգամ։ Գիտության դոկտորների թիվը 1940 թ. կազմում էր 16, գիտությունների թեկնածուներինը՝ 48 մարդ, այսինքն՝ աշխատողների 29,8%-ն ուներ գիտական աստիճան[24]։

Կադրերի որակավորման բարձրացմանը նպաստեց ասպիրանտների թվի ավելացումը։ Նրանց թիվը, 1936 թ. համեմատությամբ, 1940 թ. ավելացավ 3 անգամ և կազմում էր 33 մարդ։ Նրանցից 21-ը հասարակական գիտությունների գծով էին, իսկ բնական գիտությունների գծով ասպիրանտների թիվը 12 էր։

Սակայն, չնայած գիտաշխատողների թվաքանակի աճին ու որակավորման բարձրացմանը, գիտահետազոտական կազմակերպություններում առանձին մասնագիտությունների գծով զգացվում էր բարձր որակավորում ունեցող և լայն պրոֆիլի մասնագետ կադրերի պակաս։ Այսպես, համապատասխան մասնագետի բացակայության պատճառով Սևանի հիդրոկենսաբանական կայանում դադարեցվեց այնպիսի կարևոր թեմայի մշակումը, ինչպիսին էր «Սևանա լճի կենսաբանական ուսումնասիրությունը»։ Մասնաճյուղի համակարգում տնտեսագիտության, էներգետիկայի և այլ գիտական ուղղությունների գծով հետազոտություններ կատարող գիտական ստորաբաժանումների բացակայությունն առանձին գիտական կազմակերպությունների ստիպում էր իրենց հաստիքներում ունենալ այդ մասնագիտությունների գծով աշխատողներ՝ պրոբլեմները կոմպլեքսային և բազմակողմանիորեն ուսումնասիրելու նպատակով։ Օրինակ, երկրաբանության ինստիտուտում, երկրաբաններից բացի, աշխատում էին էներգետիկներ, տնտեսագետներ, քիմիկոսներ և գիտության այլ ճյուղերի մասնագետներ։ Նրանց թիվը երբեմն հիմնական մասնագետների քանակից

23 Նույն տեղում, գ. 11, 1940, թ. 10։

24 Նույն տեղում։

անցնում էր։ Նրանցից շատերը ներգրավվում էին պայմանագրային հիմունքներով կատարվող աշխատանքներում։ Մի կողմից, իրերի այսպիսի վիճակը տալիս էր իր դրական արդյունքը այն առումով, որ պրոբլեմները ստանում էին կոմպլեքս հետազոտության հնարավորություն, մյուս կողմից՝ դա հնարավորություն չէր տալիս ունենալու երկրաբան գիտաշխատողների հզոր համակազմ, որը հնարավորություն տար գիտական ուժերը կենտրոնացնելու զուտ երկրաբանական խնդիրների լուծման վրա։ Նման դրությունը կարող էր վերացվել մասնաճյուղի համակարգում համապատասխան ստորաբաժանումների ստեղծմամբ։ Հատկապես սուր էր զգացվում կրտսեր անձնակազմի՝ լաբորանտների, տեխնիկների պակասը, մեծ էր ճեղքվածքը գիտաշխատողների և նրանց թվաքանակի միջև։ Այսպես, մասնաճյուղի յուրաքանչյուր 10 գիտաշխատողի հաշվով նրանց թիվը կազմում էր 1,6։ Մինչդեռ գիտահետազոտական կազմակերպություններում կային շատ աշխատանքներ՝ կապված փորձեր դնելու, լաբորատոր անալիզներ կատարելու, հետազոտությունների համար սարքավորումները նախապատրաստելու, փաստական նյութեր հավաքելու հետ, որի համար պետք էր շատ ավելի մեծ թվով կրտսեր անձնակազմ։ Նման վիճակը հետևանք էր այն սխալ կարծիքի, թե առաջատար գիտաշխատողներն իրենք պետք է դնեն փորձերը և ոչ թե դրանք վերահանձնարարեն լաբորանտներին (հակառակ դեպքում, իբր ստացվում էր «լաբորատոր աշխատանք՝ պրոֆեսորական ձևակերպմամբ»[25])։

Գիտական հետազոտությունների ֆինանսավորման ծավալը 1940 թ. հասավ 5,8 մլն ռ., որը 1,3 անգամ ավել էր 1938 թ. ֆինանսավորումից[26]։ Չնայած դրան, գիտական հետազոտությունների ֆինանսավորումն ուներ մի շարք թերություններ։ Շատ հաճախ ֆինանսավորման պլանային ծավալները չէին ամրապնդվում գիտական հիմնավորմամբ[27]։

Գիտության պլանավորման բնագավառի թերություններից մեկն էլ այն էր, որ հաճախ թեմատիկ պլաններում մտցվում էին շատ թեմաներ, որոնք նախօրոք պլանավորված չէին։ Դա, որպես կանոն, չէր ուղեկցվում համապատասխան ֆինանսավորմամբ։ Գիտահետազոտական կազմակերպությունները շատ հաճախ ընկնում էին դժվարին դրության մեջ, քանի որ պլանային բոլոր թեմաների հետազոտման ձգտումը բացասաբար էր անդրադառնում կատարվող գիտական աշխատանքների որակի վրա[28]։

Այսպիսով, չնայած ուսումնասիրվող ժամանակաշրջանում ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղում գիտական հետազոտությունների կազմակերպման և պլանավորման պրակտիկայում նկատվող առաջընթացին և որոշակի հաջողություններին, գիտության պլանավորումը և կազմակերպումը մնում էին ոչ բավարար մակարդակի վրա։

Սակայն, չնայած նշված թերություններին և դժվարություններին, որոնք վերաբերում էին մասնաճյուղի ոչ թե ընդհանուր գործունեությանը, այլ միայն սոսկ գիտության պլանավորման հարցերին, Հայկական ՍՍՀ-ի երիտասարդ գիտական հաստատությունը առաջընթաց նշանակալից քայլեր էր կատարում

25 Նույն տեղում, գ. 14, 1940, թ. 82։
26 Նույն տեղում, գ. 1, 1939, թ. 10։
27 Նույն տեղում, գ. 1, 1940, թ. 4։
28 Նույն տեղում, գ. 12, 1940, թ. 48, 205։

գիտության զարգացման բնագավառում, տարեցտարի որոշակի առաջադիմություն էր նկատվում նաև գիտական հետազոտությունների պլանավորման և կազմակերպման ուղղությամբ։ Հանրահայտ իրողություն է, որ արդեն այդ տարիներին ՍՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղն իր արժանի լման ներդրեց մեր հանրապետությունում սոցիալիստական շինարարության մեծ հաջողություններում, հիմնաքար դարձավ գիտության բնագավառում հետագա հաջողությունների համար։

ВОПРОСЫ ПЛАНИРОВАНИЯ НАУКИ В АРМЯНСКОМ ФИЛИАЛЕ АН СССР (1935—1940)

САМВЕЛ КУРЕГЯН

Резюме

Создание Армянского филиала АН СССР (Армфана) в мае 1935 года сыграло выдающуюся роль в развитии науки в Армянской ССР.

В исследуемый период научные исследования проводились в основном в двух направлениях—изучались природные ресурсы и производительные силы Армянской ССР, а также ее история и культура.

В 1935—1940 годы существенно усилились материально-техническая база и научный потенциал Армфана. Укрепилась связь научных исследований, проводимых в Армфане, с практикой народного хозяйства республики, что способствовало дальнейшему развитию производительных сил Армянской ССР.

В эти годы велась значительная работа по планированию научных исследований. Однако в области планирования имелись недостатки, к которым следует отнести отсутствие должного кооперирования и координации научных исследований, которое приводило к вредному дублированию и параллелизму научных исследований. Одним из недостатков в практике планирования являлась многотемность. Не было необходимой связи между планами развития научно-исследовательских работ различных научно-исследовательских организаций. Отсутствовал также единый план развития научных исследований в Армянской ССР.